



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՄՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ և ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 17 » *Տպիսիս* 2021թ. 65-Ձ

ք. Երևան

**ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ (ՄԵԹՈԴԻ) ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԱԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ ՀՕ 22-Ն առ 08.02.2012թ. «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 3-րդ գլխի 11- րդ հոդվածի 8-րդ կետը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից մատուցված ծառայությունների միատեսակ կանոնակարգման անհրաժեշտությունը, և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել «Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման վկայականի ձևը» համաձայն հավելվածի:

2. Համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին.

սույն հրամանի ստորագրման պահից սկսած չափումների մեթոդիկաների (մեթոդների) չափագիտական վկայագրման նոր տրվող վկայականների ձևակերպումը և տվյալների լրացումն իրականացնել սույն հրամանի հավելվածով նախատեսված վկայականի ձևին համապատասխան:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ գլխավոր չափագետին:

ՏՆՕՐԵՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման վկայականի
Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրում կատարելու համար լիազորված
կազմակերպության լրիվ անվանումը

ՀՀ ՀՕ 22-Ն առ 08.02.2012թ. օրենքը «Չափումների միասնականության ապահովման մասին»,
ՀՀ Կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 883-Ն որոշումը

չափումների մեթոդի (մեթոդիկայի) չափագիտական վկայագրում կատարելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման

N° AM _____ « _____ » _____ 20 ____ թ.

չափումների մեթոդիկայի (մեթոդի) անվանումը, չափվող մեծության, մեծության սանդղակի (չափումների սանդղակի կամ

չափման միավորի) անվանումը, չափումների օբյեկտը, չափումների տիրույթը, չափումների ճշգրտության ցուցանիշները,

վկայագրման ժամանակ չափումների արդյունքների ճշգրտության ցուցանիշների որոշման եղանակը (տեսական, փորձարարական)

չափումների մեթոդիկան (մեթոդը)՝

մշակված՝

մշակողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ ֆիզիկական անձի ա. ա. հ.

կողմից,
(առկայության դեպքում) և բնակության վայրը, եթե նա գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր

սահմանված՝

փաստաթղթի անվանումը և նշագիրը՝ մեթոդիկայի շարադրմամբ

վկայագրված է ՀՀ ՀՕ 22-Ն առ 08.02.2012թ. «Չափումների միասնականության ապահովման մասին»,
օրենքի համաձայն, հաստատված չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կարգի
պահանջներին համապատասխան:

Չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման արդյունքում պարզվել է, որ
չափումների մեթոդիկան (մեթոդը) համապատասխանում է չափումներին ներկայացվող չափագիտական
պահանջներին:

Տեղեկություններ մեթոդիկայի (մեթոդի) համաձայնեցման մասին (եթե օրենսդրությամբ համաձայնեցում
նախատեսված չէ կատարվում է «Համաձայնեցում նախատեսված չէ» գրառումը) _____

ղեկավարի պաշտոնը

ստորագրությունը

ա. ա. հ.